ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ԱԺՁԱՐՈՒՅԺԼՈՒ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 21 - 22 (16416) ՇԱԲԱԹ, 19 ՄԱՐՏԻ 2016 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԻ ԱՐԺԵՁՐԿՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ»

Մարտի 17-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլու նախագահությամբ անցկացվեց կառավարության հերթական նիստը:

Նիստում կառավարության ղեկավարը խոսեց կուտակային կենսաթոշակային նոր համակարգի ստեղծման մասին: Նրա պարզաբանմամբ, այդ համակարգը հիմնվելու է գործատուի եւ աշխատակցի միջեւ պայմանավորվածության՝ պետբյուջեի համաֆինանսավորման պայմաններում:

«Վերոնշյալ համակարգը, առաջին հերթին,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՋՈՆ ՔԵՐՐԻ. «ԱՄՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻՆ»

ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԱՄՆ

Վրաստանի ԱԳ նախարար Միխեիլ Ջանելիձեն, մարտի 14-18-ը, աշխատանքային այցով գտնվում էր ԱՄՆ-ում: Այցի շրջանակներում նա հանդիպումներ ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանում իրականացվող բարեփոխումների, եվրատլանտյան կառույցներին Վրաստանի ինտեգրման հետ կապված գործընթացներն ու տարածաշրջանում ստեղծված իրավիճակի հարցերը:

«Միասնական Վրաստանը վճռական դեր պետք է կատարի Կովկասում կայունության եւ խաղաղության ապահովման գործում»,- հանդիպմանը հայտարարեց ԱՄՆ պետքարտուղարը: Ջոն Քերրիի խոսքերով, ԱՄՆ-ը ողջու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՑԱՆԿԱՑԱԾ ՓՈԽՁԻՋՈՒՄԸ ԲԱՑԱՌՎՈՒՄ Է»

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, մեկնաբանելով Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գիորգի Կարասինի հակավրացական հայտարարությունը, նշեց, որ նախ պետք է ուշադրություն դարձնել իրենց վարմունքի վրա:

«Վրաստանի տարածքային ամբողջականության ինքնիշխանության հիման վրա ձեւավորված հարաբերությունները, ինչ խոսք, կդառնան հետագա հարաբերությունների նորմալացման ցանկության հիմք: Թեպետ մենք հնարավորինս պետք է փորձենք հարցը կարգավորել, սակայն ոչ մեր

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԱԲԱՇԻՋԵ-ԿԱՐԱՍԻՆ ՁԵՎԱՉԱՓԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐԱՆԱՅՎԻ

Վրաց-ռուսական բանակցային Աբաշիձե-Կարասին ձեւաչափը կարող է վերանայվի: Հարցը դարձավ հրատապ Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի Պրահայում կատարած հակավրացական հայտարարությունից հետո:

Ինչպես նշեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, այդ հարցին կանդրադառնան Զուրաբ Աբաշիձեի վերադառնալուց հետո: Իր հերթին, խորհրդարանական մեծամասնության լիդեր Ջվիադ Կվաճանտիրաձեն նշեց, որ Կարասինը այդ հայտարարությամբ գերազանցեց իր իրավասությունները: «Մենք չենք խոսում ձեւաչափի վերացման մասին, քանի որ այն անհրաժեշտ է: Սակայն, եթե պարոն Կարասինը մտադիր է շարունակել այդ ոգով, այդ դեպքում նա այդ ձեւաչափով օգուտ բերել չի կարող»,- հայտարարեց Կվաճանտիրաձեն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՊԱՏԺՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ

Մարտի 11-ին համացանցում տարածվել էր Վրաստանի քաղաքական գործչի անձնական կյանքի ինտիմ կադրերով տեսանյութը: Բացի այդ, անհայտ անձինք, առանձին քաղաքական գործիչների ու լրագրողների սպառնացել են անձնական կյանքի մանրամասների հրապարակմամբ:

Տեղի ունեցածը լայն արձագանք առաջացրեց Վրաստանում, հանգեցրեց Վրաստանի ղեկավարության մտահոգության:

Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ երկրի ուժային մարմինների առաջին դեմքերի հետ: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի գլխավոր դատախազ Իրակլի Շոթաձեն, ներքին գործերի նախա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

Վրաստանի խորհրդարանի քննարկմանն է ներկայացվել ամուսնություն հասկացողության հստակեցումը նախատեսող սահմանադրական փոփոխությունը: Ուքսուն պատգամավորի ստորագրությամբ օրինանախագիծն արդեն հաստատվել է խորհրդարանի լիագումար նիստում քննարկման համար:

Ներկայացված օրինանախագծի համաձայն, Վրաստանի Սահմանադրության 36-րդ հոդվածի առաջին կետը առաջարկվում է ձեւակերպել հետեւյալ կերպ. ընտանիքի կազմման նպատակով ամուսնությունը հանդիսանում է տղամարդու եւ կնոջ կամավոր միություն:

Օրինանախագծի նախաձեռնողներն են ինչպես մեծամասնությունը, այնպես էլ՝ փոքրամասնությունը ներկայացնող 80 պատգամավորներ:

Նշենք, որ թեման առանձնակի հրատապություն է ստացել հասարակայնությունում այդ հարցը շահարկող առանձին հայտարարություններից հետո: Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, «Վրացական երազանք» կոալիցիայի քաղաքական խորհրդի հետ հանդիպումից հետո, հայտարարեց, որ «Վրացական երազանք» կոալիցիայի քաղաքական խորհուրդը աջակցում է սահմանադրական փոփոխությունների հարուցմանը, ըստ

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ԿՈԲԱ ԳՎԵՆԵՏԱՁԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Կոբա Գվենետաձեին նշանակեց Վրաստանի ազգային բանկի նախագահ:



Բանկի նոր ղեկավարի հետ հանդիպումից հետո Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ Կոբա Գվենետաձեն կպահպանի այն դիրքերը, որոնք անհրաժեշտ են երկրի զարգացման համար:

Ինչպես նշեց Վրաստանի նախագահը, Կոբա Գվենետաձեն ընտրվել է բացարձակ ժողովրդավարական ուղիով, բաց գործընթացում, ինչպես նաեւ կոալիցիայի հետ համագործակցությամբ: «Կոբա Գվենետաձեն արժանացավ խորհրդարանի պաշտպանությանը եւ նրա թեկնածությունն առավադրվել էր Ազգային բանկի խորհրդի կողմից»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Վրաստանի ազգային բանկի նորանշանակ նախագահի հետ հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին:

ՀԱՐԿԱՅԻՆ

ՎԵՐԱՆԵՐԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԻԶՆԵՍՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻՑ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐՈՒ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

Վրաստանի կառավարության նախաձեռնությամբ, խորհրդարանը ձեռնամուխ է եղել հարկային օրենսգրքում փոփոխությունների փաթեթի քննարկմանը, որը նախատեսում է շահութահարկի մասնատման շահութահարկի փոփոխում: Այդ մասին հայտարարությամբ հանդես եկավ Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին:

Նրա խոսքերով, եթե ընկերությունը շահույթ է ստանում, սակայն այն օգտագործում է ներդրման համար, արտադրությունից դուրս չի բերում եւ չի օգտագործում դիվիդենտների հանձնման համար, ապա այն շահութահարկ չի վճարի:

Դա միակ նորամուծությունը չէ, որը ծրագրվում է իրականացնել հարկային օրենսգրքում: Փոփոխությունն առնչվում է նաեւ հարկադրման պայմանակարգին: Ֆինանսների նախարարի պարզաբանմամբ, այն առնչվում է առանձին կատեգորիաների հարկատուներին:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

ԳԻՈՐԳԻ ԿՎԻՐԻԿԱՇՎԻԼԻ. «ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԻ ԱՐԺԵԶՐԿՄԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նախատեսում է գործող կրթաթոշակային համակարգում հավելում՝ այն տեսանկյունից, որպեսզի կենսաթոշակառուների բազային ապահովումը միշտ իրականացվի արժեզրկման հաշվառմամբ, ինդեքսացիայի պայմաններում, ինչպես նաեւ կուտակային նոր բաղադրիչի ստեղծմամբ, որը կներդրվի հաջորդ տարվա երրորդ եռամսյակից: Կուտակային համակարգը նախատեսում է համակարգ, որը ձեւակերպվում է գործատուի, աշխատողի եւ պետության համաֆինանսավորմամբ»,- հայտարարեց վարչապետը:

Նախագիծը իրականացնելու է էկոնոմիկայի նախարարությունը եւ այդ գործընթացում ներգրավվելու են նաեւ միջազգային ֆինանսական ինստիտուտները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ ՊԱՏԺՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րար Գիորգի Մղեբրիշվիլին եւ Պետական անվտանգության ծառայության ղեկավար Վախթանգ Գոմելաուրին: Վարչապետը նրանց միջադեպի վերաբերյալ անհապաղ հետաքննություն անցկացնելու հանձնարարություն տվեց:

Իր հերթին, Վրաստանի գլխավոր դատախազությունը մարտի 11-ին հետաքննություն սկսեց քաղաքական գործչի անձնական կյանքից ինտիմ կադրերով տեսանյութի տարածման փաստով:

Վրաստանի պետական անվտանգության ծառայությունը հայտարարեց, որ համացանցում «ապօրինաբար ներբեռնած» տեսանյութի տարածումից մի քանի ժամ անց, YouTube.com-ի հետ համագործակցության արդյունքում, այդ տեսահոլովակը արգելափակվել է:

Վրաստանի գլխավոր դատախազության հաղորդման համաձայն, անձնական կյանքի տեսանյութի ապօրինի տարածման գործով ձերբակալվել է Սահմանադրական անվտանգության դեպարտամենտի նախկին բարձրաստիճանավոր Զուրաբ Ջամալաշվիլին:

Նշենք, որ այդ կադրերը տարածող անձին սպասվում է 4 տարվա ազատազրկում, քանի որ հետաքննություն է ընթանում Վրաստանի քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի երկրորդ մասի հիման վրա, որը որպես առավելագույն պատիժ՝ մարդու անձնական կյանքի մասին տեղեկատվության անօրինական տարածման համար նախատեսում է 4 տարվա ազատազրկում:

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԵՍ ՇԱՏ ՀԱՐՈՒՍՏ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՎ ԵՄ ԱՊՐՈՒՄ»

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, անձնական կյանքի մանրամասների տեսանյութի հրապարակման կապակցությամբ, հանդես եկավ հատուկ հայտարարությամբ:

Նախագահի հայտարարության համաձայն, մեղավորն անպայման պատժվելու է, սակայն նախագահի հավաստմամբ, երկրի հասարակայնությունն այդ մարդկանց պետք է ցույց տա, որ իրենց նման թեման չի հետաքրքրում:

«Նախ, ցանկանում եմ դիմել այն մարդկանց, ում, անձնական կյանքի մասին տեսանյութերի հրապարակմամբ, սպառնում են: Ես ձեր կողքին եմ կանգնած եւ միշտ կլինեմ ձեր աջակիցը: Բացահայտորեն կարող եմ ասել, որ սեքսում ու սեռական կյանքում ամոթալի ոչինչ չկա: Անձամբ ես ունեմ եւ ունեցել եմ հարուստ սեռական կյանք:

Իսկ հիմա դիմում եմ ձեզ, ովքեր փորձում են նենգաշորթմամբ զբաղվել: Ձեզանից յուրաքանչյուրին կգտնենք եւ պատասխանատվության կենթարկենք: Կառավարության ներկայացուցիչների հետ ակտիվորեն ներգրավված են այդ գործում եւ ցանկանում եմ ասել, որ ամեն ինչ արվում է դրա բացահայտման համար: Համոզված եմ, որ հանցագործությունը կբացահայտվի, սակայն եթե հասարակայնությունը չկարողանա հաղթահարել զգացումը, որ հանցագործությունը կբացահայտվի:

Բացարձակ երաշխավորում եմ, որ նենգաշորթման դեմ պայքարում մենք կհաղթենք եւ, այն սրիկաները, ովքեր փորձում են նենգաշորթմամբ զբաղվել, արժանի պատիժ կկրեն:

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

ՋՈՆ ՔԵՐՐԻ. «ԱՄՆ ՀԱՍՏԱՏԱԿԱՄ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆԻՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նում է Վրաստանի կառավարության՝ երկրի էկոնոմիկայի զարգացմանն ուղղված ջանքերը: Ջոն Քերրին կրկին հավաստեց ԱՄՆ աջակցությունը՝ Վրաստանի եվրատլանտյան միտումներում: ԱՄՆ պետքարտուղարը Միխեիլ Ջանելիձեին շնորհակալություն հայտնեց Աֆղանստանում խաղաղարար գործողություններում Վրաստանի ներդրած ավանդի համար:

Հանդիպմանը ԱՄՆ պետքարտուղարը հայտարարեց, որ այս տարվա ամռանը կայցելի Վրաստան:

«Ես պլանավորում եմ հունիսին կամ փոքր-ինչ ավելի ուշ այցելել Վրաստան, մենք այժմ աշխատում ենք այդ ուղղությամբ»,- ասաց Քերրին՝ Վրաստանի արտաքին գործերի նախարար Միխեիլ Ջանելիձեի հետ Վաշինգտոնում կայացած հանդիպումից հետո:

Նրա խոսքերով՝ Վրաստանը «ԱՄՆ-ի կարեւոր բարեկամն է», եւ ինքն այցի ընթացքում մտադիր է այդ երկրի բնակչությանը վստահեցնել, որ «ԱՄՆ-ը հաստատակամորեն պաշտպանում է Վրաստանին անկախության հարցերում»:

Միխեիլ Ջանելիձեն շնորհակալություն հայտնեց Ջոն Քերրիին «Վրաստան այցելելու պատրաստակամության համար»:

ԱՄՆ կատարած այցի շրջանակներում՝ Վրաստանի արտաքին գործերի նախարարը հանդիպումներ ունեցավ ԱՄՆ կոնգրեսի ներկայացուցիչներ Մայք Կոնեգեի էդրիան Սմիթի, Սպիտակ տան ներկայացուցիչների հետ:



ՍԻՐԻԱ ՌՈՒՍԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԸ ԴՈՒՐՍ է ԲԵՐՎՈՒՄ

Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հրաման է արձակել մարտի 15-ից Սիրիայից ռուսական հիմնական զորքերի դուրսբերումը սկսելու մասին:

«Կարծում եմ, որ Պաշտպանության նախարարության առջեւ դրված առաջադրանքներն ամբողջությամբ կատարված են: Այդ իսկ պատճառով հրամայում եմ մարտի 15-ից սկսել Սիրիայից Ռուսաստանի հիմնական զորքերի դուրսբերումը»,- հայտարարել է ՌԴ նախագահը Արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովի եւ Պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուի հետ հանդիպմանը:

Նշենք, որ Սիրիայում ռուս զինվորականների գործողությունները շարունակվեցին 167 օր եւ առօրյա ծախսը կազմում էր շուրջ 2,5 միլիոն դոլար:

ՄՄԿ ՏԱՐԵՍԿԶԲԻՑ ԵՎՐՈՊԱ է ԺԱՄԱՆԵԼ 155 ՀԱԶԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆ

Տարեսկզբից Միջերկրական ծովով Եվրոպա է ժամանել 154 հազար 886 միգրանտ ու փախստական, ընդ որում՝ 467 մարդ զոհվել կամ անհետ կորել է՝ փորձելով հասնել եվրոպական երկրներ: Այդ մասին մարտի 18-ին հայտնել է Միգրացիայի միջազգային կազմակերպությունը (ՄՄԿ): Անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանում Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներից ժամանել էր 20 հազարից պակաս մարդ:

ԹՈՒՐՔԻԱ ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԿՏ ԱՆԿԱՐԱՅՈՒՄ

Թուրքիայի մայրաքաղաք Անկարայի ահաբեկչությունը տեղի է ունեցել մարտի 13-ի երեկոյան: Դրա հետեւանքով զոհվել է 37 մարդ, ավելի քան հարյուրը վիրավոր են, ընդ որում՝ 15-ի վիճակը ծանր է: Անկարայում մարտի 13-ին իրականացված ահաբեկչության գործով ձերբակալվել է 4 մարդ:

Ձերբակալվածները Շանլըուրֆայից (Ուրֆա) են, որտեղից էլ Անկարա էր բերվել պայթյունի ժամանակ օգտագործված ավտոմեքենան:

Թուրքիայի մայրաքաղաքում վերջին 5 ամսում սա 3-րդ ահաբեկչական պայթյունն է: Առաջին ահաբեկչական պայթյունը տեղի էր ունեցել 2015 թվականի հոկտեմբերի 10-ին Անկարայի երկաթուղային կայարանի մոտ: Այն ժամանակ մահացել էին 109 քաղաքացիներ: Երկրորդ պայթյունն իրագործվել էր այս տարվա փետրվարի 17-ին, այն խլել էր 29 քաղաքացու կյանք:

ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ

«Վրացական երազանք» կուսակցությունն ընթացիկ տարվա աշնանը անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին նախապատրաստման շրջանակներում ամրացնում է իր տեղական կազմակերպությունները:

Մարտի 2-3-ին «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» կոալիցիայի գլխավոր քարտուղար Կախի Կալաձեն տեղական կազմակերպություններում համաժողովների անցկացման նպատակով այցելեց Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան:

«Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» միությունն Ախալքալաքիում անցկացրեց համաժողով, որի ժամանակ ընտրեց կոալիցիայի բյուրոյի անդամներին:

Համաժողովը Ախալքալաքիի շրջանում միության ղեկավար ընտրեց շրջանային վարչության նախագահ Էդուարդ Աղասարյանին:

Ախալքալաքիում «Վրացական երազանք»-ի համաժողովը անցկացվեց «Արարատ» ռեստորանային համալիրում, որտեղ նախապես հավաքվել էին միության բազմաթիվ անդամները եւ տարբեր գյուղերի ներկայացուցիչներ:

Համաժողովի ընթացքում անվանվեցին եւ համընդհանուր քվեարկությամբ հաստատվեցին միության պատվիրակները, «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» կոալիցիայի բյուրոյի անդամները: Նրանք են՝ Անահիտ Ասատուրյանը, Ռոբինզոն Կավրելիշվիլին, Սերգեյ Լագժյանը, Խաչատուր Ալվարյանը, Շալվա Բալախաձեն եւ Ռեւազ Մետրեվելին:

* * *

Կախի Կալաձեի մասնակցությամբ Նինոծմինդայում անցկացրած համաժողովի ընթացքում Նինոծմինդայի շրջանում կուսակցական կազմակերպության նախագահ ընտրվեց Գիորգի Զմոյանը:

Ընտրվեց նաեւ կուսակցության շրջանային բյուրոն: 5 անդամից կազմված բյուրոյում ընտրվեցին Վազգեն Կաջոյանը, Հմայակ Արաբյանը, Արման Աստոյանը, Հակոբ Հակոբյանը եւ Սոկրատ Ադումյանը:

Էդուարդ Աղասարյան

Գիորգի Զմոյան

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈԼՈՐՏ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՈՒՄ

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան, տարածաշրջանային այցի շրջանակներում, Ախալցիխեի մունիցիպալիտետում այցելեց արտոնյալ ագրովարկերի նախագծի շրջանակներում համաֆինանսավորված թռչնաբուծական ֆերման:

«Մցխեթայի թռչնաբուծություն» ընկերությունը արտոնյալ ագրովարկերի շրջանակներում ստացավ 230 հազարի վարկ եւ այդ գումարով Ախալցիխեի մունիցիպալիտետի Կլդե գյուղում հիմնեց ֆերմա: Առօրյա ֆերման արտադրում է 8 հազար հատ ձու, այն իրացվում է տեղական շուկայում: Ֆերմայում աշխատում է 11 մարդ:

Ֆերմայի կազմավորման համար ծախսվել է 220 հազար դոլար:

Նշենք, որ արտոնյալ ագրովարկերի նախագծի շրջանակներում Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանին տրվել է 1577 վարկ, ընդհանուր առմամբ, 26982600 լարիի ընդհանուր գումարով եւ 59 վարկ՝ 4310780 դոլար ընդհանուր գումարով: Նախագծի շրջանակներում տարածաշրջանում բացվել է 7 նոր ձեռնարկություն:



ՆԱԽԱԳԱՀԻ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆՈՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի նախագահի աշխատակազմը, Մայա Մելիքիձեն նշանակվել է Վրաստանի նախագահի տնտեսական հարցերով նոր խորհրդական:

Նոր խորհրդականին նախագահի աշխատակազմի ղեկավար Գիորգի Աբաշիշվիլին ներկայացրեց հասարակայնությանը:

ՀՈՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԴՅՈՒՐԱՑՎԵՑ

Վրաստանի արդարադատության նախարարությունը դյուրացնում է հողի գրանցումը եւ այն դարձնում առավելագույնս մատչելի քաղաքացիների համար: Համապատասխան օրինանախագիծը կառավարությունը հաստատել է մարտի 17-ի իր նիստում:

Փոփոխությունների նպատակն է այն բարդությունների հաղթահարումը, որոնց հետ ընդհարվում են հողամասերի սեփականատերերը, գույքի գրանցման գործընթացում:

Գերատեսչության տեղեկատվությամբ, վերոնշյալ օրինանախագծի մշակումը պայմանավորված էր հողի գրանցման հարցում առկա հիմնախնդիրներով: Մասնավորապես, ներկա դրությամբ, Վրաստանում գրանցվել է առկա հողահանդակների ընդամենը 25 տոկոսը: Վերոնշյալ փոփոխության նպատակն է՝ դյուրացնել եւ խրախուսել վերոնշյալ գործընթացը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ. ԸՆԴՈՒՆՎԵՑ ՓՈԽԶԻՋՄԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի Ի.Ջավախիշվիլու անվան պետական համալսարանի ուսանողները վերջին մեկ շաբաթվա ընթացքում բողոքի ցույց էին կազմակերպել՝ բուհի կանցլերի պաշտոնում Գիորգի Գափրինդաշվիլու թեկնածության դեմ: Թեպետ դրանից հետո առաջադրվեցին նաեւ այլ պահանջներ: Մասնավորապես, ուսանողները որոշեցին հիմնել «Լսարան 115» շարժում եւ ձեւավորել բուհի բարեփոխման խորհուրդ, պահանջեցին ցրել ակադեմիական խորհուրդը, փոխել դրա կառուցվածքն ու ընտրության կարգը:

Իրավիճակի սրությունը թուլացնելու նպատակով, Գիորգի Գափրինդաշվիլին իր թեկնածությունը հանեց, թեպետ ուսանողները բողոքը շարունակեցին:

Ի վերջո ընդունվեց որոշում, ըստ որի «Լսարան 115»-ը մեկամսյա ժամկետ սահմանեց իր պահանջների բավարարման համար, հակառակ դեպքում, բողոքի ակցիայի վերսկսումը չի բացառված:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Մարտի 16-ից մեկնարկեց մագիստրատուրայի ընդհանուր քննությունների գրանցումը: Ինչպես հայտարարեց գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Մայա Միմինոշվիլին, գրանցումն անցնել եւ դրամաշնորհային մրցույթին կարող են մասնակցել բոլոր ուսանողները:

«Նաեւ սկսվում է առարկայական քննությունների հանձնման մանկավարժների գրանցումը: Ինչ վերաբերում է մագիստրատուրա ընդունվել ցանկացողներին, ապա անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը տեղակայված է մեր պաշտոնական կայքէջում»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որի Սահմանադրության մեջ գրված կլինի, որ ամուսնությունը համարվում է տղամարդու եւ կնոջ միություն:

Վերոնշյալ սահմանադրական փոփոխության կատարման հարցում իր աջակցությունը հայտնեց նաեւ Վրաստանի Պատրիարքարանը:

Պատրիարքարանի քարտուղար հայր Միխեիլ Բոթկովելին հայտնեց, որ պատրիարքարանը հաստատում է Սահմանադրության մեջ այս հստակեցման անհրաժեշտությունը: Ըստ Միխեիլ Բոթկովելու, դա կօգնի հանրությանը պաշտպանված լինելու:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ԷԻՆ

Հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով, Վրաստանի պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին հանդիպում ունեցավ Հարավային Կովկասում ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Գյունտեր Բեհլերի եւ Վրաստանում Գերմանիայի դեսպան Նենիտ Կադենբախի հետ:

Հանդիպմանը պետնախարարը խոսեց դիմակայության խաղաղ կարգավորման ուղիների եւ էրգնեթիում անցկացվող հանդիպումներում մշակվող միջոցառումների կանխման ու դրանց արձագանքման մեխանիզմների մասին:

Իր հերթին, Գյունտեր Բեհլերը հետաքրքրվեց Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի տարածքում ապօրինի ձերբակալված անձանց ազատելու հարցով:

Պաատա Զաքարեիշվիլին հյուրերին մանրամասն տեղեկատվություն տվեց վերոնշյալ հարցով մարտի 10-ին տեղի ունեցած գործընթացի մասին:

ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՄԵՆՔ ՄՏԱԴԻՐ ՉԵՆՔ ՓՈԽԵԼՈՒ «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԸ»

Ինչպես հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, վրացական ղեկավարությունը մտադիր չէ քննարկել «Բռնազավթված տարածքների մասին» օրենքի վերացումը:

Թեա Ծուլուկիանու սույն հայտարարությունն առնչվում է Ռուսաստանի ԱԳ փոխնախարար Գրիգորի Կարասինի Պրահայում արված հայտարարությանը, որ Ռուսաստանի խորհրդարանականները քննարկում են ամռանը Վրաստանում անցկացվելիք ԵԱՀԿ խորհրդարանական ասամբլեայի նիստի մասնակցության հարցը: Սակայն դրա համար նրանք պետք է ունենան անվտանգության երաշխիքներ եւ այն, որ «Բռնազավթման մասին» գործող օրենքը խորհրդարանականներին հիմնախնդիրներ չի ստեղծի: Կարասինը նշել էր, որ լավ կլիներ, եթե վրացական իշխանությունները ընդհանրապես վերացնեն այդ օրենքը:

Ինչպես նշեց Ծուլուկիանին, կառավարությունում քննարկումներ են արվել օրենքում այնպիսի նորմերի ներառման հնարավորության մասին, որոնք կդյուրացնեն խառը վրացաբխազական եւ վրաց-օսական ընտանիքների կեցությունը: Թեա Ծուլուկիանու խոսքերով, ներկա դրությամբ, վրացական ղեկավարությունը չառնչվելով քաղաքականությանը, համագործակցում է աբխազական եւ հարավ-օսեթական կողմերի հետ: Նախարարը նշեց, որ կողմերը փոխանակել են բանտարկյալներին, իրականացնում են նաեւ արխիվային փաստաթղթերի փոխանակումը:

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՑԱՆԿԱՑԱԾ ՓՈԽԶԻՋՈՒՄԸ ԲԱՑԱՌՎՈՒՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

արտաքին վեկտորի եւ ոչ էլ մեր տարածքային ամբողջականության հաշվին, դրանում ցանկացած փոխզիջումը բացառված է: Թեպետ առավելագույնս պետք է ձգտենք նվազեցնել լարվածությունը եւ անցնել այն ռեժիմին, որը հնարավորություն է տալիս խոսել հիմնախնդիրների կարգավորման շուրջ»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Գիա Վոլսկին, Գրիգորի Կարասինի հայտարարությունը համարեց ագրեսիվ: Նրա խոսքերով, Կարասինի հայտարարության մեջ նկատվում է Վրաստանի ներքին գործերին խառնվելու փորձ: «Նախընտրական ժամանակահատվածում նման հայտարարությունների թիվը կավելանա: Կարծում եմ, որ Վրաստանի հասարակայնությունը ինքը կորոշի եւ կկազմի խորհրդարանն ու կողմնորոշիչները: Կարծում եմ, որ կառավարության դիրքորոշումը ճիշտ է եւ Ռուսաստանի հետ բանակցությունները կարեւոր են, սակայն դրանք ոչ մի կերպ չեն փոխում մեր արտաքին քաղաքական կուրսը: Հետեւաբար, գտնում եմ, որ այդ հայտարարությունն այնքան էլ դիվանագիտական չէր»,- հայտարարեց Վոլսկին:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՄՏԱԴԻՐ ՉԷ ՎԵՐԱՑՆԵԼ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԸ

Պրահայում Ռուսաստանի արտաքին գործերի փոխնախարար Գրիգորի Կարասինը հայտարարել է, որ ներկա փուլում Ռուսաստանը մտադիր չէ վերացնել Վրաստանի քաղաքացիների համար այցեգրային պայմանակարգը:

«Վրաստանի ինքնիշխան իրավասությունն է, որ Ռուսաստանի հետ վերացրել է այցեգրային պայմանակարգը: Բայց մենք այդպես չենք վարվի տարբեր պատճառների, այդ թվում՝ անվտանգության հարցերի պատճառով: Վերջին ժամանակներում Ռուսաստանի նախագահն ընդունեց որոշում եւ կտրուկ մեծացրեց այն մարդկանց շրջանակը, ովքեր կարող են Վրաստանի քաղաքացիներին հրավիրել Ռուսաստան:

Գրիգորի Կարասինը նշեց նաեւ, որ գլխավոր սպառնալիքը Վրաստանում խորհրդարանական առաջիկա ընտրություններն են եւ հակառուսական հայտարարությունները: «Ցավալի է, որ այդ արտահայտությունները արվում են պաշտոնական ներկայացուցիչների, քաղաքագետների, նախարարների եւ նախագահի կողմից: Բնականաբար, մենք այդ ամենին հետեւում ենք, անում համապատասխան եզրակացություններ, թեպետ չենք պատասխանում: Այսօր հենց այդ ջրբաժանն է՝ կամ վերադառնում ենք դիմակայությանը, կամ խոսում փոխհարգալից ոգով եւ այդ ենթատեքստում լուծում մեր երկկողմ խնդիրները»,- ասել է Կարասինը:

ՀԱՐԿԱՅԻՆ

ՎԵՐԱՆԵՐԴՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԲԻԶՆԵՍՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

«Հարկադրման պայմանակարգը չի առնչվի առանձին կատեգորիայի հարկատուներին, օրինակ, արտադրող ֆիզիկական անձանց ապահովագրական եւ միկրոֆինանսական կազմակերպություններին, բանկերին, նաեւ այն կազմակերպություններին, որոնց օրենսդրությամբ արգելվում է շահույթի մասնատումը, հետեւաբար նրանք այն մասնատել չեն կարող: Ստացած շահույթը մասնատելու իրավունք չունեն, մասնավորապես, հանրային իրավունքի իրավաբանական անձինք եւ ոչ կառավարական հատվածը»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

Ինչ վերաբերում է տոկոսադրույթին, դիվիդենտներին, ապա նախարարն այդ թեմայի շուրջն էլ սպառիչ բացատրություն ներկայացրեց. «Տոկոսադրույթին, ռոյալին եւ դիվիդենտներին ներկայումս գործող դրույթը պահպանվում է: Արտադրությանը շահութահարկի վճարման համար հաշվետու ժամանակաշրջանը մեկ տարվա փոխարեն կդառնա մեկ ամիսը, հետեւաբար ընկերությունը շահութահարկը կվճարի միայն այն դեպքում, երբ այդ մեկ ամսվա ընթացքում չի իրականացնի շահույթի մասնատումը»,- նշեց նախարարը:

Նրա խոսքերով, շահութահարկով կհարկադրվի դիվիդենտի կամ այլ տեսքով մասնատված շահույթը, գույքի սպասարկման անփոխահատույց մատուցումը, սահմանված գումարից ավելի կատարված ներկայացուցչական ծախսերը եւ այն հարկերը, որոնք կապված են ոչ տնտեսական գործունեության հետ: «Միջոցները, որոնք ուղղված կլինեն տնտեսական զարգացման, արտադրության ընդլայնման, աշխատատեղերի ավելացման վրա, չեն հարկադրվի եւ գտնում ենք, որ վերոնշյալ փոփոխություններն ուժի մեջ կմտնեն ընթացիկ տարվա հուլիսի 1-ից»,- ընդգծեց Նոդար Խադուրին:

Նրա պարզաբանմամբ, մինչեւ հուլիսի 1-ը վեց ամիսը համարվում է հին կարգով գործող արտադրությունների հռչակագրման ժամանակահատված, եւ դա կշարունակվի մինչեւ նոյեմբերի 1-ը, իսկ հետո ամեն ինչ կընթանա սովորական ամենամսյա հաշվարկով: «Դրանով կդյուրացվի հռչակագրումը եւ հարկային ստուգումը»,- նշեց նախարարը:

Նոդար Խադուրի

Բնականաբար, հարկային օրենսգրքում ծրագրվելիք փոփոխությունները կհանգեցնեն բյուջետային փոփոխությունների:

«Առաջարկված բարեփոխումներն առաջին փուլում կհանգեցնեն բյուջետային եկամուտների նվազեցման եւ այդ նվազեցումը պետք է անպայմանորեն վավերացվի բյուջեում: Մոտ ժամանակներում մտադիր ենք այդ բյուջետային փոփոխությունը ներկայացնել հաստատման»,- ասաց ֆինանսների նախարարը:

Նախարարի հավաստմամբ, եկամուտների նվազեցումը չի առնչվի սոցիալական եւ ենթակառույցային հատվածներին եւ կվերաբերվի միայն ընթացիկ ծախսերին:

«Հուսով ենք, որ ծրագրված բարեփոխումների իրականացման դեպքում, տնտեսական աճը զգալի ազդակ կստանա: Այն առանձնակի ազդեցություն կգործի փոքր եւ միջին գործարարության վրա, ինչը կարտահայտվի արտադրության ծավալի ավելացման եւ միջոցների կուտակման վրա: Արդյունքում, գործարար միջավայրը շատ ավելի կայուն կդառնա ճգնաժամերի պայմաններում»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Կառավարության նորամուծությունների կապակցությամբ, դիմեցինք բիզնեսասոցիացիայի ներկայացուցիչ Իրակլի Ասլանիշվիլուն:

«Կառավարության նիստում բարձրացված հարցը, հարկ է բաժանել երկու մասի: Մեկը վերաբերում է միավորի մոդելի ծրագրմանը, ինչը լրիվությամբ փոխում է հարկադրման պայմանակարգը շահույթի հարցում: Վերաներդրման դեպքում, գործարարն ազատվում է շահութահարկից, ինչը բավականին մեծ ազդակ է նրա համար: Նրանք կունենան լրացուցիչ միջոցներ եւ ավելի կայուն կարող են լինել հիմնախնդրային տարբեր գործոնների ծագման դեպքում: Դա նպաստում է նաեւ ընկերությունների զարգացմանը:

Նվազ կարեւոր չէ նաեւ հարկային վարչարարության թեման, որը դյուրացնում է ընկերությունների կողմից շահույթի հռչակագրման վարչական կողմը: Միաժամանակ նորամուծությունը թեթեւացնում է եկամտային ծառայության գործունեությունը, ինչը թույլ է տալիս վերջինիս ռեսուրսներն օգտագործել այլ ուղղություններով:

Ինչ վերաբերում է երկրորդ փոփոխությանը, ապա հարկային ազատականացված պայմանակարգը, որի մասին հայտարարեց վարչապետը, եւս արտակարգ նշանակալից է: Այդ հարցում կարելի է առանձնացնել որոշ ուղղություններ:

Հարցերից մեկը վերաբերում է այն հատվածին, որն ընկերությունը հնարավորություն կունենա արժեքի ավելացված հարկով (ԱԱՀ) հարկադրված գործողությունը կատարելիս, մեքենա-սարքավորումների ներկրման ժամանակ ազատվելու հարկադրումից: Դա իրագործելի է այն դեպքում, երբ ներբերված մեքենա-սարքավորումները բարելավում են տնտեսական գործունեությունը եւ նպաստում մրցունակության բարձրացմանը:

Երկրորդ նշանակալից նորամուծությունն այն է, որ, հարկային վեճի առկայության պայմաններում, եկամուտների ծառայությունն առանց դատարանի թույլտվության չի կարող փակել արտադրությունը, մյուս կողմից՝ գործարարին էլ իրավունք է վերապահվում բողոքարկելու նման որոշումը:

Դրական կարելի է գնահատել նաեւ այն հանգամանքը, որ ստուգումներն իրականացնելու է միայն եկամուտների ծառայությունը, եւ քննչական ծառայությունը դրանում չի ներգրավվի:

Իրականացվելիք փոփոխությունների կապակցությամբ, հաճախ արվում են ենթադրություններ, որ գործարարներն օգտվելով դրանից, կարող են թաքցնել էական եկամուտները: Հավատացնում եմ, որ դա այնքան էլ դյուրին գործ չէ, քանի որ, երբ իրականացնում ես վերաներդրումը, դա պետք է ունենա որոշակի արդյունք: Ստուգումը լրիվությամբ կարող է բացահայտել կեղծիքը, այդ դեպքում հարկադրումը շատ ավելի խիստ կլինի, այնպես որ, գործարարներն իրենք շահագրգռված չեն լինի սխալ տեղեկատվություն ներկայացնելու հարցում:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՎՐԱՅԱԿԱՆ ԼԱՐԻՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹՂԹԱԴՐԱՄ

Լարիի նորացված թղթադրամը արժանացել է միջազգային պարգեւի:

Մարտի 15-ին Բուխարեստում HSP EuropeTM խորհրդաժողովում կազմակերպված պարգեւատրման արարողությանը Եվրոպայի եւ ԱՊՀ երկրների մասշտաբով, տարածաշրջանային լավագույն թղթադրամի «2016 թվականի լավագույն տարածաշրջանային թղթադրամ» անվանակարգում հաղթել է վրացական տարադրամի նորացված թղթադրամը (20, 50 եւ 100 լարիանոցները):

Տարվա անվանակարգում ներկայացվել էին եվրոպական կենտրոնական բանկի նոր 20 եվրո թղթադրամը, Շվեդիայի կենտրոնական բանկի շվեդական կրոնայի նոր թղթադրամը, Հունգարիայի կենտրոնական բանկի 20000-անոց ֆորինտը, Իսրայելի կենտրոնական բանկի 200 շեկել թղթադրամը, Ուկրաինայի կենտրոնական բանկի 500 գրիվնի թղթադրամը, Ռուսաստանի կենտրոնական բանկի 100 ռուբլիանոց հոբելյանական թղթադրամը, Բելառուսի կենտրոնական բանկի թղթադրամների նոր տեսականին եւ վրացական 20, 50 եւ 100 լարիանոց նոր թղթադրամները:

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՆ ՏԱԼԻՍ ՎԵՐԱՆԱՅԵԼ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Եվրոպական կազմակերպության փորձագետները, իշխանությանը խորհուրդ են տալիս վերանայել բարեփոխումների գործընթացում ընդունած որոշումները եւ նախատեսել գործընթացում ներգրավված կողմերի՝ ընդդիմադիր կուսակցությունների ու ոչ կառավարական կազմակերպությունների դիրքորոշումները:

Վենետիկի հանձնաժողովի եւ ԵԱՀԿ-ի՝ Վրաստանի ընտրական օրենսգրքի փոփոխությունների կապակցությամբ, ընդունած համատեղ եզրակացությունում ընդգծված է, որ իշխանության կողմից ընդունած փաստաթուղթը չի կարող համարվել որպես ընդդիմադիր կուսակցությունների եւ քաղաքացիական հատվածի հետ միասին ընդունած համատեղ փոխհամաձայնեցված առարկա:

Վենետիկի հանձնաժողովը ողջունում է իրենց նախկին հանձնարարականների եւ սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ընտրողների ձայների հավասարեցման հաշվառումը, այդ թվում՝ մեծամասնական ընտրամարզերում արգելագիծը մինչեւ 50 տոկոս հասցնելը: Թեպետ նշված է եզրակացությունում, որ սահմանների նոր հստակեցումը իրականացվեց առանց չափորոշիչների, հաշվի չառնվեցին պատմական, աշխարհագրական եւ ժողովրդագրական իրողությունները եւ, ընդհանրապես, չափորոշիչների բացակայությունը ստեղծում է իրավիճակ, երբ գործընթացը հնարավոր է օգտագործվի «կարճաժամկետ քաղաքական նպատակներին հասնելու համար»:

Հանձնաժողովը մտահոգություն է հայտնում այն կապակցությամբ, որ չնայած նրան, որ օրենքն ընդունվել էր դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին, ընտրամարզերի ընդհանուր քանակությունը դեռեւս սահմանված չէ (չորս մեծ քաղաքներում՝ Թբիլիսի, Բաթումի, Ռուսթավի եւ Քութայիսի): Առկա 30 ընտրամարզերի սահմանները կրկին հստակեցված չեն, եւ դա դրված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վրա, այն դեպքում, երբ հանձնաժողովը դրա իրականացման ոչ մի հնարավորություն չունի, ինչը մինչեւ ընտրությունների անցկացման ժամանակի գործոնի հաշվառումը անհավասար պայմաններ է ստեղծում ընտրական գործընթացի մասնակից բոլոր սուբյեկտներին՝ կուսակցություններին, թեկնածուներին, ընտրողներին, իսկ ընդհանուր առմամբ, սպառնալիքի տակ դնում ողջ ընտրական գործընթացը:

Վենետիկի հանձնաժողովի եզրակացությունում առանձնակի ընդգծված է, որ վերջին մի քանի տարվա ընթացքում ընտրություններին ներգրավված կողմերի միջեւ անցկացվում էին տեւական բանավեճեր ընտրական համակարգի բարեփոխման հարցով, որի ընթացքում հիմնականում քննարկվում էր մեծամասնական եւ համամասնական բաղադրիչներով խառը համակարգից լրիվությամբ համամասնական համակարգին անցնելու հարցը: Ընդդիմադիր կուսակցությունները եւ քաղաքացիական հատվածը հիմնականում պաշտպանում են ընտրական համակարգի վերոնշյալ բարեփոխումը, այն ժամանակ, երբ կառավարող կոալիցիան նույնպես պաշտպանելով այդ փոփոխությունները, գտնում է, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունների համար 2016 թվականի հոկտեմբերին նման փոփոխությունները նպատակահարմար են: Լրիվությամբ համամասնական ընտրահամակարգին անցնելու սահմանադրական փոփոխության առաջարկությունը ներկայացվել էր խորհրդարանին, թեպետ այն չընդունվեց: Հետեւաբար, 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն գործող խառը ընտրակարգի պայմաններում, ընտրական նոր մարզերի սահմաններում: